

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՕԳՈՍՏՈՍ

Ծնվել եմ առավոտյան շուտ,
գյուճրվա մի աղքատիկ առավոտ:
Ինձ հետ ծնված քույրս մահացել է մի քանի ժամ հետո,
երբ օգոստոսի արևը վաղուց արդեն դուրս էր եկել
և անտարբեր նայում էր մեր մոլորված ընտանիքին,
որը մեկ խնդում էր մեկ՝ լալիս սրտակեղեք:
Հիմա մեր տանը ոչ ոք չի խոսում նրա մասին,
ոչ ոք չի հիշում նրան՝ քրոջս,
որին ի՞նչ էին տեսել, ընդամենը մի քանի ժամ,
ետպատերազմյան մի կիսաքաղց առավոտ...
Միայն ես չեմ կարողանում մոռանալ, և երբեմն
արթնանում եմ վաղ առավոտյան սրտիս ցավից
և աչքերս թաց, մթության մեջ պառկած,
օր առ օր վերհիշում եմ այն ինը ամիսները,
որ միասին ապրել ենք
մեր կյանքի լավագույն շրջանում...

ՎԵՐՋԻՆ ՀԵՔԻԱԹ

Գրադարանները պայթում են գրքերի առատությունից:
Գուցե թե սա վերջին դա՞րն է,
կամ էլ առավել սարսափելի՞ն՝ վերջին տարի՞ն:
Իսկ քանդակագործը քանդակում է անվերջ,
և արվեստանոցը բերնեբերան լցված է քանդակներով,
և տունը լցված է քանդակներով,
և կինն ու երեխաները ստիպված փողոցում են ապրում,
բայց շուտով փողոցն էլ կլցվի քանդակներով,
իսկ քանդակագործը քանդակում է անվերջ
և ոչ մի հնար չկա նրան կանգնեցնելու:

Գուցե թե սա վերջին դա՞րն է,
կամ էլ առավել սարսափելի՞ն՝ վերջին տարի՞ն:

Բուռն շինարարություն է ծավալվել վերջին անմարդաբնակ
կղզում
հօթելներ, մօթելներ, բազաներ և տուրբազաներ,
ամենուրեք փոշի, վերամբարձ կռունկներ, ցեմենտ, կիր ու
ավազ,
և աղբահավաք մեքենան ծով է տանում լցնի ինչ–որ
ցնցոտիներ,
փալաս-փուլուս, ռոբինզոններ ու ուրբաթներ թափքի մեջ
բարձած...

Գուցե իսկապե՞ս սա վերջին դարն է,
կամ էլ առավել սարսափելի՞ն՝ վերջին տարին:

Իսկ հեքիաթն ընթանում է իր սովորական հունով
նույն թագավորի տղան և թագավորի աղջիկը նույն,
նույն բարի հրեշտակը և նույն սատանան չար...

Միայն թե «լինում է, չի լինում»-ի փոխարեն –
եղել է ու այլևս չի լինի...

Իսկ հեքիաթի վերջում երկնքից երեք նեյտրոնային ռումբ
են ընկնում,

մեկն ինձ, որպես հեքիաթասացի,
մյուսը ձեզ, որ համբերությամբ ապրեցիք այսքան
տարիներ,

իսկ երրորդը՝ հենց այնպես,
հետաքրքրության համար: